

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ
ՍՈՒՐԴՈՄԱԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

Ս. Ս. Մուրադյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի հատուկ մանկավարժության և
հոգեբանության ամբիոնի դասախոս

Հանգուցային բառերև արտահայտություններ. սուրդոմանկավարժներ, լսողական ընկալում, արտաբերական կարողություններ, համակարգչային խաղեր, լսողության խանգարում ունեցող նախադպրոցականներ:

Ցանկացած ժամանակաշրջանում հատուկ գիտամեթոդական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվել զարգացման այս կամ այն խանգարում ունեցող երեխաների ուսուցմանը, դաստիարակությանն ու զարգացմանը, ինչպես նաև նման կարևոր հարցերով գրաղվող մասնագետների իրազեկվածությանն ու նրանց մասնագիտական պատրաստվածությանը [2, 5, 7, 8]: Ակնհայտ է, որ երեխաների հետ կազմակերպվող ցանկացած շտկողազարգացնող, դաստիարակչական աշխատանք (նաև կավարժական ներազեցություն), կարող է անարդյունավետ լինել, եթե գործընթացն իրականացնող մասնագետն աչքի ընկնի ցածր մասնագիտական իրազեկվածությամբ:

Հետևաբար, լսողության խանգարում ունեցող երեխաների լսողական ընկալման և արտաբերման

կարողության զարգացման հիմնահարցի շուրջ տվյալ ոլորտի մասնագետների, այս երեխաների ծնողների և Խ. Աբովյանի անվան ՐՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի <<Սուրդոմանկավարժություն>> բաժնի բարձր կուրսի ուսանողների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրումն էլ դարձավ մեր հետազոտության առարկան:

Մեր հետազոտական աշխատանքի շղանակներում առաջնահերթ փորձել ենք բացահայտել.

- սուրդոմանկավարժների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների վերաբերնունը լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերման կարողության ձևավորման և զարգացման խնդրին,

- հատկապես որ տարիքն առավել արդյունավետ է արտաբերման կարողության զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքների համար,

- լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերման կարողության զարգացման համար կիրառվող հիմնական միջոցները և մեթոդական հնարները,

- լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացման համար ծնողներին և մասնագետներին ուղղված հատուկ մեթոդական նյութերի մշակման անհրաժեշտությունը,

- լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերական կարողությունների զարգացման հարցում իրենց պատրաստվածության մակարդակի գնահատումը մասնագետների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների կողմից,

- լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերական կարողության զարգացման աշխատանքների արդյունավետության ապահովմանը խոչընդոտող հանգամանքները,

- մասնագետների, ծնողների ու բարձր կուրսի ուսանողների կողմից՝ երեխաների խոսքի ճիշտ արտաքերման կարողությունների ձևավորման ու զարգացման համար կանխատեսվող նորամուծությունները:

Այս և նման այլ հարցերի ուսումնասիրման համար մեր կողմից մշակվել են հատուկ հարցաքերթիկներ և անկետաներ լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների և Խ. Աքռվյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի <<Սուրդոմանկավարժություն>> բաժնի բարձր կուրսի ուսանողների համար:

Ընդհանուր թվով հարցմանը, գրուցին, անկետավորմանը մասնակցել է թվով 168 մասնագետ (սուրդոմանկավարժներ, հատուկ մասնագետներ, հատուկ հոգեբաններ, լոգոպեդներ, սոց. աշխատողներ), 96 ծնող և 102 ուսանող:

Անկետաների արդյունքների ուսում-

նասիրումը ցույց տվեց, որ հարցմանը մասնակցած մասնագետների շուրջ 52,6%-ի տարիքը չի գերազանցում 30 տարեկանը, 20,5 %-ը՝ 30-40 տարեկանը, 10%-ից քիչ ավելին 50-60 տարեկաննամասնագետներին։ Հարցմանը մասնակցած մասնագետների 58%-ն ուներ բարձրագույն հատուկ մասնագիտական կրթություն, 37,5% -ը՝ բարձրագույն մանկավարժական կրթություն։ Հարցմանը մասնակցած մասնագետների միայն աննշան մասն ուներ թերի բարձրագույն կրթություն։

Հարցմանը մասնակցած մասնագետների մեծ մասն աշխատում էին Արարկիր ԲՅ ԵՂԱԻ-ին կից գործող <<Հավատ>> և <<Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոնում>> (նաև՝ նույն կենտրոնի ք. Արարատի մասնաճյուղում), <<Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում>> և այլ հատուկ հաստատություններում։ Մեր կողմից անցկացված հասարակական հարցման ընթացքում մասնագետների 20,5%-ը չէր աշխատում, իսկ 88,3%-ի աշխատանքային ստաժը տատանվում էր 5-ից 10 տարիների սահմանում։

Վերոնշյալ փաստերը վկայում են այն մասին, որ հետազոտմանը մասնակցել են բարձրագույն կրթությամբ և լավ աշխատանքային փորձով համեմատաբար երիտասարդ (25-40 տարեկան) մասնագետներ։

Ուսումնասիրվող հարցերի համակարգում մեզ առաջնահերթ հետաքրքրում էր մասնագետների, այս երեխաների ծնողների և բարձր կուրսի ուսանողների վերաբերմունքը լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտ արտաքերման կարողության ձևավորման և զարգացման հարցին։ Մեզ հետաքրքրում էր, թե


որքանով էին նրանք կարևորում նախադպրոցական տարիքում լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացմանը միտված աշխատանքի արդյունավետությունը, ինչպես են գնահատում իրենց իրազեկվածության մակարդակը ուսումնասիրվող հարցի շուրջ, որքանով են պատրաստակամ կազմակերպելու և անցկացնելու մանկավարժական շտկողազարգացնող աշխատանք այսպիսի երեխաների արտաքերման կարողության և, առհասարակ, բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ:

Դարձ ենք համարում նշել, որ հարցմանը մասնակցած մասնագետների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների մեծամասնությունը կարևորում էին լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացմանը նպաստող հատուկ աշխատանքի անցկացումը: Այսպիսով՝ անկետավորմանը մասնակցած 112 մասնագետներից 89-ը (79,4%), բարձր գնահատելով իրենց իրազեկվածության մակարդակը, նշել էին, որ նախադպրոցական տարիքի լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացման ընդհանուր համակարգում շատ կարևոր է ճիշտ արտաքերման կարողության զարգացումը, մասնագետների 20,6%-ը դժվարանում էին կողմնորոշվել:

Ընդգծելով լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտարտաքերական կարողության զարգացման և դրա շտկման անհրաժեշտությունը՝ անկետավորմանը մասնակցած բարձր կուրսի ուսանողների 46%-ը խոսքի զարգացման աշխատանքում ճիշտ արտաքերման կարողության ձևավորումը դնում էին առաջին տեղում, իսկ 42,1%-ը՝ երկրորդ տեղում:

Ծնողների ավելի քան 83 %-ը, բարձր գնահատելով իրենց իրազեկվածության մակարդակը, կարևորում էին լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացմանը նպաստող հատուկ շտկողազարգացնող միջոցառումների կազմակերպումը: Միևնույն ժամանակ, նրանք այս աշխատանքի կազմակերպումն ու անցկացումը կարևորում էին հատկապես տնային պայմաններում՝ նշելով, որ երեխան ավելի շատ ժամանակ տանն է անցկացնում, քան մասնագետի մոտ:

Այսպիսով՝ վերը ներկայացված փաստերը վկայում են այն մասին, որ սուրող-մանկավարժների, այս երեխաների ծնողների և բարձր կուրսի ուսանողների մեծա-մասնությունը կարևորում էին լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների ճիշտ խոսքային արտաքերման կարողության ձևավորման շուրջ կազմակերպվող շտկողազարգացնող աշխատանքները: Յենց այդ մասին են վկայում հատուկ մասնագետների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների համար մեր կողմից կազմակերպած և անցկացրած հասարակական հետազոտության, անկետավորման, հարցման, գրույցի արդյունքների վերլուծությունը (նկար 1):



1—մասնագետներ, 2—ուսանողներ,
3—ծնողներ

Նկար 1. Լողության խանգարում ունեցող նախադպրոցական ների արտաքերման կարողության զարգացման խնդրի շուրջ հարցման մասնակիցների պատասխանների ցուցանիշները:

Մասնագետներից շատերի աշխատանքային գործունեության մեջ ոչ բավարար չափով էին արտահայտված նրանց մասնագիտական ունակությունները, իրազեկվածության մակարդակն ու աշխատանքի կազմակերպման, անցկացման համար պահանջվող կարողությունները:

Այսպիսով, համաձայն հարցմանը մասնակցած 56 մասնագետների, ծնողների և բարձր կուրսի ուսանողների անկետավորման արդյունքների՝ նրանք բավականաչափ իրազեկված չեն ուսումնասիրվող հարցերի շրջանակում: Միայն բարձր կուրսի ուսանողների 20,2 %-ը և ծնողների 21,5%-ը <<Ծանոթ եք լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերական կարողությունների զարգացմանը նպաստող հայալեզու համակարգչային խաղերի>> հարցին դրական պատասխան էին տվել՝ այդ խաղերի շարքում նշելով ուսումնական խաղեր (որոնք մեզ մոտ չեն կիրառվում) և լսողական ընկալմանը նպաստող համակարգչային խաղ: Այսինքն, կարելի է ասել, որ տվյալ ցուցանիշները չեն համապատասխանում հարցի բուն բովանդակությանը: Բարձր կուրսի ուսանողների ավելի քան 28,1%-ն ու ծնողների 42,7%-ն իրենց համարում էին բավականաչափ իրազեկված ուսումնասիրվող հարցերում, այն պարագայում, երբ նրանցից շատերը նշեցին, որ իրենք չունեն բավարար գիտելիքներ նման լուրջ աշխատանք կազմակերպելու և անցկացնելու համար, որն էլ պայմանավորված է անբավարար մե-

թողական մոտեցումների, միջոցների, ուղեցույցների բացակայությամբ:

Մեր հետազոտության տեսանկյունից ելնելով՝ կարևոր է համարում բացահայտել, թե մասնագետները, ծնողները և բարձր կուրսի ուսանողները հատկապես ո՞ր տարիքից են կարևորում լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերական կարողությունների ծևավորման և զարգացման աշխատանքների սկսելը: Չնայած հայտնի է, որ որքան վաղ տարիքում ախտորոշվի լսողության խանգարումն ու որքան վաղ կազմակերպվեն շտկողազարգացնող աշխատանքներն, այնքան արդյունավետ այն կընթանա [6]:

Ուսումնասիրվող հարցի շրջանակներում լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող 56 մասնագետների հարցման և զրուցի արդյունքում պարզվեց, որ նրանց գրեթե 10,7 %-ն իրենց աշխատանքներում երեխաների արտաքերման կարողության զարգացմանն սկսում են առավել լուրջ ուշադրություն դարձնել 2,5 տարեկանից, մասնագետների 30,3 %-ը՝ 3 տարեկանից, իսկ մասնագետների 9,8 %-ը նշել էին, որ այդ աշխատանքները կազմակերպում են ցանկացած տարիքում՝ երբեմն ստիպված լինելով հաշվի առնել ծնողների ցանկությունները:

Ներկայացվածից պարզ է դառնում, որ հարցմանը մասնակցած մասնագետների մեծ մասը (39,3 %) նշել է, որ լսողական խնդիր ունեցող երեխաների ծնողներն իրենց են դիմում բավականին ուշ՝ ավագ նախադպրոցական և դպրոցական տարիքում, այն դեպքում, երբ լսողության խանգարումը բացահայտվել է բավականին վաղ ժամանակահատվածում:

Այսպիսով՝ պարզ դարձավ, որ

լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետները պատրաստակամ են աշխատելու երեխայի արտաքերման կարողության ձևավորման և զարգացման ուղղությամբ առավել վաղ տարիքից, քանի որ քաջ գիտակցում են վաղ կազմակերպվող շտկողազարգացնող աշխատանքների նշանակությունն ու կարևորությունը: Սակայն անկախ ամեն ինչից՝ այս աշխատանքը անցկացվում է երեխայի աճի և զարգացման ամենատարբեր տարիքային փուլերում, որտեղ իրենց <<մեղքի բաժին ունեն>> այս կամ այն պատճառվ երեխայի այցը մասնագետի մոտ հետաձգող ծնողները: Միգուցե այստեղ տեղին կլինի ծնողների համար ավելի հաճախ և ավելի շատ մասնագիտական խորհրդատվությունների, հանդիպումների կազմակերպումը, որոնք կնպաստեն ծնողների իրագեկմանը ուսումնասիրվող խնդրի շուրջ:

Փաստացիորեն անկետավորմանը մասնակցած 112 մասնագետների 75,8 %-ը նշում է, որ լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի զարգացման աշխատանքների իրագործման հետ մեկտեղ նրանք մշտապես պարապմունքներ են կազմակերպում ծիշտ արտաքերման կարողության ձևավորման ուղղությամբ, իսկ հարցմանը մասնակցողների 6,2 %-ը միևնույն աշխատանքն իրականացնում է հազվադեպ, միայն երբ անհրաժեշտություն է առաջանում: Մասնակիցների 17,8 %-ը նշեց, որ այդ աշխատանքին իրենք գրեթե առանձնահատուկ ուշադրություն չեն դարձում:

Քարցմանը մասնակցած ծնողների շուրջ 83,3 %-ը կարծում է, որ լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացման համար իհմնականում որ բաղադրիչներն են կարևորվում՝ <<Սուրդոմանկավարժություն>>

գացմանը նպաստող աշխատանքներ անպայման պետք է կազմակերպվեն տնային պայմաններում: Սակայն ծնողների ավելի քան 57,3 %-ը միևնույն հարցի վերաբերյալ ունեին այլ կարծիք: Նրանք նշեցին, որ չունեն բավարար գիտելիքներ և չեն տիրապետում այս աշխատանքի իրագործման համար պահանջվող միջոցներին ու մեթոդներին: Դետևաբար ավելի շատ կարևորությունը տալիս էին նման միջոցների ու մեթոդների շրջանակի ընդլայնմանն ու լուսաբանմանը:

Դետևաբար, զարգացնելով լսողությանխանգարումունեցողերեխաների ծիշտ խոսքային արտաքերման կարողությունը մասնագետների 22,3 %-ը առաջնահերթ ուշադրություն է դարձնում լսողական ընկալման ունակության զարգացմանը, ձայնի դրմանն ու խոսքային շնչառության ձևավորմանը, մինչդեռ մասնագետների 17,8 %-ը կարևորում է արտաքերման նմանակման կարողությունը, 11,6 %-ը կարևորում է բանավոր խոսքի ամբողջական զարգացումը, արտաքերական շարժումների և ձայնակցման կարողությունների պահպանումը, իսկ մասնագետների 9,8 %-ի կարծիքով կարևոր են հնչարտաքերական կարողություններն ու հնտությունները: Մասնագետների 5,3 %-ը կարևորում է երեխաների շուրթերից կարդալու կարողության զարգացումը:

Պայմանավորված նրանով, թե լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացման համար իհմնականում որ բաղադրիչներն են կարևորվում՝ <<Սուրդոմանկավարժություն>> բաժնի բարձր կուրսի ուսանողների շուրջ 19,6%-ը առանձնացրեց խոսքային շնչառության և ձայնի դրման զարգացումը, ուսանողների գրեթե

21,5%-ը կարևորեց ճիշտ, հստակ հնչյունների, վանկերի, բառերի և արտահայտությունների արտաքերումը, իսկ 9,8%-ի կարծիքով կարևոր են բոլոր բաղադրիչները: Սակայն հարցման մասնակիցների մեջ կային անձինք, ովքեր պարզապես դժվարանում էին պատասխանել հարցին (հարցմանը մասնակցած ուսանողների ընդհանուր թվի 6%-ը):

56 մասնագետների հարցումն ունեանց հետ կազմակերպված զրոյացը ցույց տվեց, որ նրանց մեծամասնությունը լսողության խանգարում ունեցող երեխանների հետ իրենց աշխատանքում մեծ ուշադրություն են դարձնում երեխանների շփման պահանջի ձևավորմանն ու զարգացմանը՝ որոշիչ դերը տալով լսողական ընկալմանն ու խոսքային արտաքերմանը: Ընդ որում, մասնագետների 32,1%-ը հատկապես կարևորում էր պարզ, բնականին մոտ արտաքերությունը, 17,8%-ը՝ առանձին հնչյունների ճիշտ, հնարավորինս հստակ արտաքերությունը, իսկ 11%-ը հատկապես ուշադրություն էր դարձնում սխալ արտաքերվող (հնչյունային փոխարինումներ, բացթողումներ, շփորումներ) հնչյունների, ամբողջական խոսքում առկա թերությունների շտկմանն ու հաղթահարմանը:

Այն հարցին, թե լսողության խանգարում ունեցող երեխանների արտաքերման կարողությունների զարգացման համար ինչ միջոցներ ու մեթոդներ են կիրառում, անկետավորմանը մասնակցած 112 մասնագետների մեջ մասը պատասխանել էին՝ նմանակման մեթոդը, այդ թվում՝ հնչյունների դրման համակենտրոն մեթոդը, 25%-ը՝ խաղային մեթոդներ, իսկ 9,8%-ը՝ ձայնի նմանակում: Մասնագետների անկետավորման 112 պատասխաններից 54,3 %-ը մեջ տեղ

էր տալիս լսողության խանգարում ունեցող երեխանների արտաքերական կարողությունների զարգացմանը նպաստող համակարգչային խաղերին՝ նշելով դրանց անհրաժեշտությունը ՀՀ –ում և բացը լրացնելու պահանջը: Միևնույն ժամանակ լսողության խանգարում ունեցող երեխանների արտաքերական, խոսքի զարգացմանը նպաստող համակարգչային խաղերի մասին պատկերացում ունեին հարցմանը մասնակցած ծնողների 21,5 %-ը և բարձր կուրսի ուսանողների 20,2 %-ը (ՀՀ – ում նշում էին դրանց բացակայության փաստը և ծանոթ էին միայն << Վիդմայ քեչ >> համակարգչային խաղին), այդ իսկ պատճառով, գործնականում գոյություն ունեցող խաղերի կողքին երբեմն կիրառում են փորձարարությամբ չիմնավորված խաղային հնարներ, միջոցներ, որոնք մասնագետների անձնական փորձի և ինացության արդյունքն են: Դրանք իհմնականում պարզ խաղային հանձնարարություններ և վարժություններ են տարբեր առարկաների ներմուծման պայմաններում՝ բամբակ, մատիտ, թեթև գնդակներ և այլն:

Անկետանների ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, թե լսողության խանգարում ունեցող երեխանների արտաքերական կարողության զարգացման միջոցների ընդհանուր համակարգում ինչ տեղ են զբաղեցնում հատուկ խաղային հանձնարարությունները, վարժություններն ու համակարգչային խաղերը, քանի որ այս տարիքի երեխաններն առավել լավ ընկալում են խաղային ձևով ուսուցանվող նյութերը [1, 3, 4]:

Ինչպես ցույց է տալիս մասնագետների ուղղված հարցման պատասխաններն՝ լսողության խանգարում

ունեցող երեխաների արտաքերական կարողությունների զարգացմանը նպաստող միջոցները, մերոդմերն ու սուրդոմանկավարժական մոտեցումները ուղղված են խոսքային շնչառության, ձայնի, լեզվի, շուրբերի զարգացմանը, առանձին հնչյունների, բառերի վրա տարվող աշխատանքի և իհարկե խոսքի արտահայտչական կողմի կատարելագործմանը:

Բացի այդ մասնագետներից շատերի աշխատանքի կազմակերպման միօրինակությունը պայմանավորված է շտկողազարգացնող պարապմունքների անցկացման համար հայալեզու միջոցների, մեթոդների, այդ թվում՝ համակարգչային խաղերի բացակայությամբ՝ չնայած վերջին տարիներին մասնագետների կողմից ներդրվել են խաղեր, վարժություններ, հնչյունային ռիթմիկայի անցկացման ձևեր [1]:

Աշխատանքների արդյունավետ անցկացման համար մասնագետներն առաջարկում են.

- կազմակերպել և անցկացնել լոգոպեդի ու սուրդոմանկավարժի համագործակցված աշխատանքային գործունեություն,
- այս երեխաների արտաքերական կարողությունների զարգացման համար մշակել հայալեզու համակարգչային խաղեր,

• ծնողների համար մշակել խորհրդատվական գրույցներ լսողական սարքերի վաղ կիրառման դերի և նշանակության մասին,

• ընդլայնել խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի զարգացման և շտկման աշխատանքներով զբաղվող հատուկ կենտրոնների, խորհրդատվական ծառայությունների և մանկական վերականգնողական կենտրոնների շրջանակը,

• հաստատել և ընդլայնել

երեխաների արտաքերական կարողությունների ամրապնդմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը նպաստող հատուկ կենտրոնների, վերականգնողական հաստատությունների և ծնողների միջև կապը,

• մշակել լսողության խանգարում ունեցող երեխաների ծիշտ խոսքային արտաքերման կարողության զարգացմանը նպաստող աշխատանքների բովանդակություն ու մեթոդական մոտեցումներ՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկություններն ու հնարավորությունները,

• մշակել երեխաների արտաքերման կարողության զարգացմանն ուղղված հայալեզու մեթոդական ձեռնարկներ, գործնական խորհուրդներ ծնողների համար:

Այսպիսով՝ ուսումնասիրվող հարցերի շուրջ մասնագետների, ծնողների և <>Սուրդոմանկավարժություն>> բաժնի բարձր կուրսի ուսանողների հիագեկվածության մակարդակի բացահյուտման համար կազմակերպված և անցկացված հասարակական հետազոտման արդյունքները մեզ հանգեցրին հետևյալ եզրակացությունների.

1. Ուսումնասիրության մասնակիցների մեջ մասն ընդգծում էր լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաքերման կարողության զարգացման կարևորությունը,

2. աշխատանքային փորձը վկայում է այն մասին, որ ծնողների մեծամասնությունը երեխայի ծիշտ խոսքային արտաքերման կարողության ձևավորման համար մասնագետներին դիմում են կամ ավագ նախադպրոցական, կամ կրտսեր դպրոցական

տարիքում,

3. հարցմանը նասնակցողները նշում են լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացմանը նպաստող հայալեզու համակարգչային խաղերի բացակայության փաստը և միաժամանակ կարևորում դրանց անհրաժեշտությունը,

4. հարցմանը նասնակցողները նշում են լսողության խանգարում ունեցող երեխաների արտաքերման կարողության զարգացման ուղղված գիտամեթոդական գրականության անբավարարությունը, ինչպես նաև տնային պայմաններում այս միջոցառումների կազմակերպմանը նպաս-

տող գործնական խորհուրդների բացակայությունը,

5. փաստվել է հարցմանը նասնակցողների ցանքը իրազեկվածության նակարդակը՝ լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտ խոսքային արտաքերման կարողության զարգացման հարցի շուրջ,

6. հաստատվել է լսողության խանգարում ունեցող երեխաների ծնողների համար տնային պայմաններում երեխաների արտաքերման կարողության զարգացմանը նպաստող մեթոդական մոտեցումների, ցուցումների և գործնական խորհուրդների անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Վ. Մանուկյան-, Լսողության խանգարում ունեցող նախադպուղական տարիքի երեխաների բանավոր խոսքի զարգացումը խաղային գործնքացում: Ուսումնամեթոդական ձեռնարկ-Եր., <<ԴԱՎԻԹԹԱԳԱՎՈՐ>>, 2012.- էջ 21-36:

2. М. И. Земцова. Изучение слабовидящих детей с задержками развития. М. Просвещение, 1973.- 159 с.

3. С. А. Зыков. Методика обучения глухих детей языку. М. Просвещение, 1977.- С. 40-43; С. 150-200.

4. О. И. Кукушкина. Компьютер в специальном обучении. М. ИКПРАО. Уtrecht, 1995.

5. А. Р. Маллер. Социальное воспитание и обучение детей с отклонениями в развитии: Практическое пособие. М. АРКТИ, 2005.- 176 с.

6. Л. А. Головчиц. Дошкольная сурдопедагогика: Воспитание и обучение дошкольники-ков с нарушениями слуха: учеб. пособие для студ. высш. учеб. заведений. М. Гуманит. изд. центр ВЛАДОС, 2001.- С. 191-220.

7. Б. К. Тупоногов. Основы коррекционной педагогики // Дефектология. М. Школа Пресс, 2004.- 375 с.

8. В. А. Титов. Дефектология: конспект лекции. Ростов-на-Дону. Феникс, 2014. – С. 183-202.

РЕЗЮМЕ

ОСВЕДОМЛЕННОСТЬ СУРДОПЕДАГОГОВ ОБ РАЗВИТИИ ПРОИЗНОШЕНИЯ ДОШКОЛЬНИКОВ С НАРУШЕНИЯМИ СЛУХА

С. С. Мурадян

преподаватель кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены результаты исследования характеристик уровня осведомленности сурдопедагогов, родителей и студентов о развитии произносительных навыков у дошкольников с нарушениями слуха. На основе которого мы пред-

лагаем методы, средства и условия для проведения корекционно-развивающей работы, поскольку произношение является одним из важных компонентов развития правильной речи у детей с нарушением слуха.

SUMMARY

AWARENESS OF SPECIAL EDUCATORS ABOUT DEVELOPMENT OF PRONUNCIATION PRESCHOOL CHILDREN WITH HEARING IMPAIRMENT

S. S. Muradyan

lecturer at the Chair of Special Pedagogy and Psychology
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

The article presents the results of a study of characteristics awareness surdopedagogists, parents and students about the development of pronunciation skills in pre-school children with hearing impairments. On the basis of that, we

offer methods, means and facilities for the corrective and developmental work, because the pronunciation is an important component of the development of correct speech for children with hearing impairment.